

— Թիֆլիզի լրագրները արդար զայրութով բողոքում են պատանիների մի չարութեան առիթով: Աւագ ուրբաթ գիշերը Զգրաշէն եկեղեցու մօտ մի քանի պատանիներ պետարդայ են պայթեցրել գիշերային հսկման և սուգի ժամանակ ահ ու սարսափի մատնելով ժամաւորներին: Ինչո՞ւ, ինչի՞ց դրդուած: Եթէ Աստուծոյ երկիւղը և մարդկանց ամօթը այլևս տեղ չունեն, գոնէ սէրը դէպի իրանց մերձաւորները—մայրերն ու քոյրերը պէտք է յետ կասեցնէր այդ պատանեակներին անմիտ չարութիւնից:

Այս չարութիւնը աւելի ևս ծանր կերպարանք է ստանում, ի նկատի ունենալով, որ գործողները փողոցային սրիկաներ չեն, այլ դպրոցական աշակերտ:

Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ռ

Ամսիս 15-ին Աւագ—Հինգշաբթի երեկոյեան հանդիսաւորութեամբ կատարուեց ոտնալուայի արարողութիւնը: Հանդիսագիրն էր Վեհափառ Հայրապետը: Նորին Սրբութիւնը ոտնալուայից յետոյ աւուր պատշաճի քարոզ խօսեց բացատրելով սիրոյ և խոնարհութեան մեծութիւնն ու անհրաժեշտութիւնը ամեն մի քրիստոնէի համար թէ նրա առտնին և թէ հասարակական կեանքում:

— Ամսիս 18-ին Մայր Աթոռիս միաբանութիւնը Զատիկի տօնի շնորհաւորութեան համար Ս. Պատարագից առաջ ներկայացաւ Վեհափառ Հայրապետին: Նորին Սրբութիւնը շնորհաւորելով Յիսուսի յարութիւնը, բարեմաղթեց, որ թմրած մտքերը, հոգիներն ու սրտերն ևս յարութիւն առնեն լաւը, բարին և կատարեալը հասկանալու ու գործելու համար: Քրիստոսին հաւատացողն մեղքի մեռելութիւնից յարութիւն առնելով պէտք է քրիստոնէի վայել կեանքով ապրի:

Ապրիլի սկիզբներին Ղարաբաղի նախկին առաջնորդ Տ. Աշոտ եպիսկոպոսը վերադարձաւ Մայր Աթոռու։

Զատիկի երկրորդ օրը, մեռելոց երկուշաբթի, միաբանական ուխտը ս. պատարագից առաջ օրհներով միաբանական գերեզմանատունը և հանգստեան պաշտօն կատարելով Ս. Գայիանէի վանքում և Մայր Տաճարի առաջ ի յիշատակ հանգուցեալ հայրապետների և տաճարների նուիրատուների ու երախտաւորների, ս. պատարագից յետոյ էլ կատարեց հոգեհանգիստ համօրէն հայ ազգի և Թիֆլիզի ասնաֆների ննջեցելոց համար։

Փրկչի 1683 և Հայոց 1131 թուին Թիֆլիզի ասնաֆներն ու դուքանդարները խոստացել են ամէն մէկը տարեկան մի մի չարէք մօմ տալ Ս. Էջմիածնին, իսկ միաբանները խոստացել են հինգ նաւակատեաց մեռելոցներին «պաշտմամբ և պատարագօք յիշատակել»։ Այս երկուստեք խոստումը արձանագրուած է Մայր Տաճարի զանգակատան որմնասիւնի վերայ, ներսի կողմից ըստ այսմ.

«Կամաւկ Ա՛յ մեր Թիֆլիզու ամենայն ասնաֆ և դուքանդար խոստացանք տարէնն ամէն դուքան մէկ մէկ չարէք մօմ տալ Սուրբ Էջմիածնայ և միաբանք Սուրբ Աթոռոյս խոստացան Ե. Նաւակատեացն զմեզ պաշտմամբ և պատարագօք յիշատակել ի թուին ռճլա, ի հայրապետութեան Տեառն Նղիազարու»։

Զատիկի բ. օրը Երևանից եկան Մայր Աթոռու փոխ— թեմակալ առաջնորդը, թեմական դպրոցի հոգաբարձուները և թեմ. խորհրդի անդամները, ներկայացան Վեհ. Հայրապետին, շնորհաւորեցին Քրիստոսի սուրբ յարութիւնը և նոյն օրը վերադարձան Երևան։

Զատիկի տօների արձակուրդին Մայր Աթոռու այցելեցին—Ապրիլի 20—ին Թիֆլիզի իգական բ. գեմնազիւյի ա-

աշակերտութիւններէց 18 հոգի իրանց 7 ուսուցչութիւններէ
և Պ. Եվֆիմի Սիմէօնովիչ Տակայշուիլու հետ, իջեանեցին,
հիւրասիրուեցին և գիշերեցին վանքի հիւրատանը:

Աշակերտութիւնները տեսան Մայր տաճարն ու եկեղե-
ցական Թանգարանը, Մատենադարանը, հնութիւնների
Թանգարանը, մերձակայ վանքերն ու Զուարթնոց եկեղե-
ցու պեղումները:

Հետեւեալ օրը, ամսիս 21-ին աւարտելով իրանց չորս-
գայութիւնը ժամը 11-ին ներկայացան Վեհ. Հայրապետին:
Պ. Ե. Ս. Տակայշուիլին բոլորի կողմից յայտնեց շնորհա-
կալութիւն ընդունելութեան և հիւրասիրութեան համար:

Վեհափառ Հայրապետը օրհնեց բոլորին, որոնք համ-
բուրելով նորին Սրբութեան Ս. Աջը իջան վեհարանից և
ցերեկուայ ժամը 12-ին մեկնեցին Մայր Աթոռից դէպի
Երևան:

Աշակերտութիւնները ըստ ազգութեան էին հայ՝ 6, վրա-
ցի՝ 2, ռուս՝ 6, հրէայ՝ 1, լեհ՝ 1, գերմանացի՝ 2.—18:
Յանձին Ե. Ս. Տակայշուիլու, որ յայտնի է կովկասագիտու-
թեան մէջ իւր հնախօսական, տեղագրական և պատմա-
կան ուսումնասիրութիւններով, աշակերտութիւնները ունէին
մի անփոխարինելի առաջնորդ, որ մասնագէտի հմտու-
թեամբ բացատրում էր ամեն բան և բաւարարութիւն
տալիս նրանց հարցասիրութեան:

Նոյն օրը այցելեցին Մայր Աթոռ Երևանի Ս. Գա-
յիանեան հայ ծխական դպրոցի աշակերտութիւնները թուով
10 հոգի իրանց 2 ուսուցիչների և մի վարժուհու առաջ-
նորդութեամբ:

Ապրիլի 21-ին եկան Աշտարակի ծխական դպրոցների
աշակերտութիւններից և աշակերտներից մի խումբ, իրանց
ուսուցիչների և ուսուցչուհու հետ. այցելեցին Մայր Աթոռ
և դարձեալ ընդունուեցին ու գիշերեցին վանքի հիւրա-
տանը: Սրանք ևս իրանց ուսուցիչների առաջնորդութեամբ
չորսօրեայցին ու տեսան բոլոր տեղերն ու հաստատու-
թիւնները:

Բացի դպրոցական հաստատութիւններից, մասնաւոր

անձինք ևս, օգտուելով Զատկական տօներին, այցելեցին Մայր Աթոռս։

Ուրախալի է այն կենդանի հետաքրքրութիւնը, որ այցելուները, հայ և օտարազգի, ցոյց են տալիս դէպի Մայր Աթոռ և նրա զանազան հաստատութիւնները։

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՆ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

Բողոքարիայի Թագաւորը Կ. Պօլսում Պատրիարքի հրաժարականի խնդրի Միջնադէպ միախնդի պատճառով, Քաղաքական ժողովի որոշումներ, Երիտասարդ եպիսկոպոսացուների խնդրի, Երուսաղէմայ գործեր։

Բողոքարական Թագաւորի Կ. Պօլսում եղած ժամանակ մեր սրբ. պատրիարքը կամեցաւ ներկայանալ Նորին Մեծութեան և շնորհակալութեան ուղերձ մատուցանել այն մարդասիրութեան համար, որ Նորին Մեծութեան կառավարութիւնը ցոյց էր տուել Արդիւ Համիդի հալածանքի օրերին Բողոքարիա ապաստանող հայերին։ Այս տեսակցութիւնը չէ յաջողուել, որովհետեւ ժամադրութիւն խնդրելու դիմումն, որպէս թէ ուշացած է եղել։ Բայց Կ. պօլսոյ լրագիրները պատճառը համարում են այն, որ բողոքարիայի Թագաւորը չըկամենալով յունաց պատրիարքի հետ տեսակցել, հրաժարուել է միւս ազգերի կրօնապետների հետ տեսակցութիւնից էլ։

Մեր սրբ. պատրիարքը անձամբ մատուցանելիք ուղերձը ուղարկել է բողոքար գեոպանի միջոցով և նոյն միջոցով էլ ստացել է Թագաւորի շնորհակալութիւնը։

Կ. Պօլսոյ լրագիրները հաղորդում են, որ մեր սրբազան պատրիարքը տկար է. և դարձեալ հրաժարականի խնդիրը նետուած է հրապարակ։

Բիւզանդիոնը ասում է, եթէ պատրիարքը հրաժարուի